

Pueque
1913

Къ 300-лѣтію Царствованія Дома Романовыхъ.

(245) из

ԹՈՒՍԱՏԵՐԻ ԽԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ եւ

ՄԻԽԱՅԼ ՖԵԼԴՈՐՈՎԻՉ ՌՈՄԱՆՈՎԻ

ԹԵԳԵՆԻ ԸՆՏՐՈՒՅՆ

(1613 թ.)

Смутное время на Руси

Избрание на Царство Михаила Феодоровича Романова въ 1613 году.

Բազուի քաղաքային Պումաի բարեգարգիչ յանձնաժողովի
հրատարակութիւն

Издание Комиссии по благоустройству гор. Баку.

2004

Б.А.К.У.

Типография А. Н. Тараева и И. О. Степанянца.

1913.

9(47)

Դ - 95

9(47)
n-95

Н 2-1029а

ԱՌԻՍԱՏԱՆԻ ԽԱՐՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ.

ՄԻԽԱՅԼ ՖԵԴՈՐՈՎԻԿԻ ՌՈՄԱՆՈՎԻ ԹԱԳԱԽՈՐ ՀՆ.
ՏՐՈՒԻԼԸ *

(1613)

3833


Смутное время на Руси.

Избрание на царство Михаила Федоровича Романова 1613 г.

1613 թ. մեր հայրենիքը տօնելու է իշխող Բռնանովսկի արքայական տան երեքնարիւրամեակը, Այս տարի բոլոր մտքերը զբաղուած կը լինեն այդ կարեոր իրողութեամբ, որոնց պատճառով էլ մենք դարձնում ենք մեր հայեացքը մեր հայրենի պատմութեան գէպի հեռաւոր անցեալը, որը իւրաքանչիւր ուուս մարդու սրտին պէտք է միշտ մօտ, հետաքրիլ և թանկագին լինի:

Այն ժամանակներում սարսափելի օրեր էին տիրում Ռուսաստանում: Եւ այդ վիճակն սկսուեց Յուլիաննէս Գրողնու մահից յետոյ: Ռուսաց երկիրը տնօքալով անքում էր անիշխանութեան, երկպառակութեան, ինքնակոչների և գերի արշաւանքի պատճառով: Ռուս մարդիկ ծանր օրեր էին անցկացնում, խտանակութիւնները չափաբար չատ էին, ամեն

*) Այս յօդուածը պէտք է կարդացուի՝ գլուցակո՞ւ տօնակատարութեան ժամանակ:



29323-67 թ

կողմ հոսում էր արիւն ու արցունք, և լուռմ էին հառաջանք ու հեծկըլտոց: Թւռում էր թէ պիտի քանդուի, կորստեան մատնուի Ռուսական մեծ երկիրը: Ռուսաց պատմութեան մէջ այդ ծանր ժամանակները կոչում է «չար տարիներ» և «խառն ժամանակ»:

Յովհաննէս Գրոդնու մահուանից յետոյ արքայական գահ բարձրացաւ նրա որդին Ֆէոդոր Իվանովիչը: Ֆեոդոր թագաւորը թէ մարմնով և թէ հոգով թոյլ մէկն էր: Նրա ուժերից վեր էր կառավարել ինչպէս պետութիւնը, նոյնպէս և կամապաշտ բոյարներին:

Ֆէոդոր Իվանովը համարւում էր միայն անւանական թագաւոր, իսկապէս պետութիւնը կառավարողն էր Բորիս Գոդունովը, թագաւորի կնոջ եղբայրը:

Գահաժառանգ համարւում էր թագաւորի մանուկ եղբայրը, ցարեիչ Դիմիտրին, որ մօր հետ միասին տպրում էր Ռոգլիչում:

Յանկարծ ամբողջ թագաւորութեան մէջ սարսափելի մի լուր սկսեց շրջել, թէ Ռոգլիչում խողխողել են ցարեիչ Դիմիտրիին: Ժողովրդի մէջ սոսկալի յուզում բարձրացաւ: Ռոգլիչում կատաղի ամբոխը պատառ-պատառ արաւ երեխայի սպանութեան մէջ կասկածուած անձնաւորութիւններին: Ֆէոդոր թագաւորը Ռոգլիչ ուղարկեց բոյարին-իշխան Շույկուն և մետրապոլիտ Հելիասին և հրամայեց նրանց, որ քննութիւն կատարեն և գատ անեն, որանք գտել էին, որ արքայորդին ինքը, ուշագնացութեան հիւանդութեամբ բռնուած ժամանակ, ընկել է իր դանակի վրայ և վիրաւորուել:

Ֆէոդոր թագաւորը շուտով մեռնում է. սուրբ Վլադիմիրի տոհմը լնդհատւում և լնդարձակ Ռուսաստանը մնում է առանց թագաւորի: Այն ժամանակ հաւաքուեց բոյարների Դուման, նրանք զեմսկի ժողովի հրաւիրելով՝ լնարեցին Բորիս Գոդունովին թագաւոր:

Ռուբախութեան համար չէր, որ Բորիս Գոդունովը տիրապետեց Ռուսական գահին: Ամենից առաջ նա աշխատեց իւր գահը ամրացնել իւր ժառանգների վրայ: Այդ նպատակին համնելու համար նա կանգ չէր առնում ոչ մի բամբասանքի և մատնութեան առաջ այն բոյարների դէմ, որոնք վտանգաւոր էին թւում իրեն:

Առանձնապէս անտանելի էին թւում նրան իշխան Ռոմանովները: Նիկիտա Ռոմանովը Ֆէոդոր թագաւորի հարազատ քեռին էր: Ռոմանովների հին տոհմը վաղուց գովուած էր անբիծ ազնւութեամբ: Բոյար Նիկիտան (Յովհաննէս Գրոդնու առաջի ամուսնու հարազատ եղբայրը) միշտ անխնամների անվախ պաշտպանն էր: Նա ժողովրդի մէջ այնպիսի սէր և պատիւ էր վայելում, որ ժողովրդական երգերի առարկայ էր դառել. նրա մահից յետոյ մնացին վեց որդի՝ մէկը միւսից գեղեցիկ: Նրանց մէջ ամենից աւելի աշքի էր ընկնում Ֆէոդոր Նիկիտիչը: Լինելով բարձրահասակ, գեղեցկադէմ և շնորհալի — խիստ տարբերուում էր բոյարներից իւր թագաւորական վայելութեամբ: Միշտ գեղեցիկ հագուած և ուրախ, նա լաւ ձի էր քշում և որս անում բաղէներով: Ժողովուրդը չէր կարող չսքանչանալ գեղեցիկ-բոյարով: Բայց աւելի գեղեցիկ էին նրա հոգեկան առանձնայատկութիւնները. նա բարի էր, ձշմարտասէր և

այն ժամանակի համեմատ լաւ կը թուած, նոյնիսկ
զիտէր լատինական լեզուն:

Աւանդութիւնը տառւմ է, որ անժառանգ մեռ-
նող ֆէոդոր Իվանովիչ թագաւորը կամենում էր իր
մահից յետոյ գահը ֆէոդոր Նիկիտիչին յանձնել:
Բայց դրութիւնը ուրիշ կերպ փոխուեց:

Բորիս թագաւորը, Ռոմանովսկի տոհմի մէջ
տեսնելով իւր գահին վտանգաւոր մրցակիցներ, են-
թարկում էր նրանց ծանր հալածանքների: Շատերին
աքսորում էր, շատերին տանջում և շատերին էլ
մահուան պատճի ենթարկում: Բոլոր հինգ եղբայր-
ները մեռան կամ աքսորավայրում կամ ծանր տան-
ջանքների մէջ: Ժողովրդից սիրուած ֆէոդոր Նիկի-
տիչի հետ վտանգաւոր էր այդպէս վարուիլ: Բայց և
այնպէս նրան մեղագրում էին թագաւորին դաւաճա-
նելու մէջ, ուստի ոյժով հոգեորական ձեռնադրեցին,
անունը դրին Ֆիլարետ և Սեյսի վանքը աքսորեցին:
Նրա կին ԿաՅնիային, Մարֆա անուան տակ նոյնպէս
ուղարկեցին Չաօնէժիայի Եգորեսկի վանքը: Նրանց
երեխաներին—Միխայիլին (ծնուած 1596 թ. յուլի-
սի 12-ին) և քրոջը իր հարազատ մօրաքրոջ հետ
Ապիտակ լիճ ուղարկեցին:

Միխայիլի երեխայութիւնը անցնելով առանց
ձնողների փաղաքշանքների, ապագայ թագաւորի
կեանքի վրայ թողեց ծանր թափծի հետք: Ինչպէս
յայտնում էին թագաւորին, Ֆիլարետ Նիկիտիչը աք-
սորավայրում շատ էր կարօտում իր ընտանիքին,
շարունակ տանջուելով ասում էր. «Իմ սիրելի երե-
խաներ—փոքրիկ, թշուառ թռչնիկներ: Այժմ ո՞վ
պէտք է կերակրի նրանց: Ով զիտէ, կհնդանի է ար-

դեօք իմ տանջուած կինը: Ես զգում եմ—նրան մի
այնպիսի տեղ են աքսորել, որ իմ մասին լուր ան-
գամ չի համի: Օ՞հ, շատ ծանր է ինձ համար, որ
կինս և երեխաներս մնացել են անխնամ... Ամեն
անգամ նրանց յիշելիս, կարծես, սիրոս խայթելիս
լինեն: Երանի Ռուսուած նրանց մահ տար!» Բայց
Տէրը այլ կերպ դատեց:

Սակայն Մոսկուայի ժողովուրդը իր սիրելի բո-
յար Ռոմանովսկի դառը վիճակին համակրանքով էր
վերաբերում և չէր մոռանում նրանց բարերարու-
թիւնները:

Բորիս թագաւորը հանգստացաւ:

Նա կարծում էր, որ թագաւորական գահը ար-
դէն ապահովել է իր ժառանգների համար:

Հենց այդ ժամանակ Ռուսաց թագաւորութեան
մէջ պատահում են զանազան դժբախտութիւններ:
Վրայ է համնում սոսկալի սովը, որ տեսում է երեք
տարի: Ժողովուրդը ուտառում էր խոտ և նոյնիսկ աղը:
Մեռնողների թիւը հազարների էր համնում: Յետոյ մի
վատ հիւանդութիւն տարածուեց, որից միայն Մոսկ-
ւայում 500 հազար մարդ մեռաւ: Սովին և հիւան-
դութեանը հետեւցին թալաններ և աւագակութիւն-
ներ, որոնք կատարւում էին ոչ միայն խուլ ան-
կիւններում, այլ նոյնիսկ մայրաքաղաքի մօտերքում:
Բորիս թագաւորի ձեռք առած միջոցներից աւագա-
կութիւնները քչացան, Բայց այդ բոլորից յետոյ
Ռուսաստանում պատահեց մի նոր դժբախտութիւն:
Յանկարծ տարածուեց մի զարհուրելի լուր...

Ռուսում էին, թէ գահաժառանգ Դիմիտրին կենդա-
նի է, որ Ռուսիչում նրա տեղ սպանուած է եղել մի

ուրիշ երեխայ և իբր թէ հաւատարիմ մարդիկ նրան
մինչև այդ ժամանակ ծածուկ են՝ պահել, բայց այժմ
նա կգայ Գողունովից պահանջելու իր հօր գահը:

Ժողովուրդը յուզում էր: Վաղուց արդէն լու-
րեր էին պտառում, որ Գողունովին է մարդիկ ուղար-
կել գահաժառանգին սպանելու, որպէսզի այդպիսով
ինքը կարողանայ տիրանալ գահին: Այժմ շատերը
տրտնջում էին թէ «Սստուած պատժում է թագա-
ւորին իւր սարսափելի մեղքի համար»: Այդ լուրերը
արդէն Բորիս թագաւորին էին հասել: Նա հրամայել
էր խիստ հետեւել: Ամեն մի անգոյշ խօսքի համար
մարդկանց ձերբակարում էին, ենթարկում տանջանք-
ների և նոյնիսկ մահուան պատժի: Կեանքը դառել էր
ծանր և սարսափելի:

Սարսափելի լուրը կայծակի արագութեամբ տա-
րածուեց ամբողջ Ռուսաստանում: Այդ ժամանակ
ինքնակոչ Դիմիտրին զօրքի գլուխ անցած, Լեհաստա-
նից գնում էր Մոսկուայի վրայ: Նրան օգնում էին
Լեհական թագաւորը և ազնուականութիւնը նոյնիսկ
ամենանպարտ իշխան Մնիշիկը իւր գեղեցկուհի աղ-
ջիկ Մարինային պսակեց ինքնակոչ Դիմիտրիի հետ:

Լեհական ամենահարուստ իշխան Վիշնեվցիկին
օգնում էր ինքնակոչին փողով և զօրքով: Ամեն աեղ
թուցիկներ էին նետում, թէ եկողը Դիմիտրին է —
«Յոհաննէս Գրովնու իսկական որդին»:

Շատ միամիտ մարդիկ իսկապէս հաւատացին,
որ կենդանիէ իսկական գահաժառանգը: Միայն նրանք
չէին հասկանում, որ խորամանկ լեհերի նողատակն
է տիրանալ Ռուսաստանին, բայց խելացի Բորիս Գո-
դունովը ամեն բան հասկանում էր: Նա հրամայեց

Ուգլիչից Մոսկուայ բերել սպանուած գահաժառան-
գի մասունքները: Իսկ պատրիարքը ինքնակոչին ե-
կեղեցուց հեռացուած յայտարարեց: Բայց և այնպէս
Բորիս թագաւորը նախազգում էր իր մօտակայ մա-
հը և այդ պատճառավ սարսափելի յուզմունքներով
տանջում էր:

1605 թ. ապրիլ ամսին, երբ նա ձաշից յե-
տոյ իր պալատի կտուրը գուրս եկաւ հրճուելու Մոսկ-
ւայի տեսարանով, յանկարծ նրա ականջներից և բե-
րանից սկսեց արիւն հոսել: Նա մեռաւ հաւատա-
ցած լինելով, որ իւր խախուտ և անհիմն գահի ամ-
բողջ ծանրութիւնը թողնում է պատանի որդի Ֆէո-
դոր Բորիսավիչին:

* *

Պատանի թագաւորը Բասմանովի գլխաւորու-
թեամբ մեծ զօրք ուղարկեց ինքնակոչի դէմ: Բայց
ապերախտ Բասմանովը դաւաճանեց իւր թագաւորին:
Նա իւր զօրքի առաջ բացարձակ խոստովանեց, որ
Դիմիտրին իսկական գահաժառանգն է և զօրքի հետ
միասին անցաւ ինքնակոչի կողմը:

* *

Ինքնակոչը մեծ շուքով դիմեց գէպի Մոսկուայ:
Նրա կողմից Մոսկուա եկած մարդիկ խեղճ պատանի
Ֆէոդոր թագաւորին սպանեցին, իսկ նրա քոյր կը-
սենիային վանք մացրին: Ինքնակոչը Մոսկուա մը-
տաւ և յունիսի 30-ին թագաւոր օծուեց: Շուտով
բազմաթիւ լեհերի հետ եկաւ արքայական հարս-
նացու Մարինա Մնիշեկը:

Հէնց իր թագաւորութեան սկզբից ինքնակոչը ժողովրդին տուեց բաւականաչափ իրավունքներ, աքսորավայրից յետ կանչեց ֆիլարետին և նշանակեց Ռոստովի միտրոպոլիտ։ Այդպիսով նա կամենում էր ժողովրդին գուր գտի։ Բայց գժբախտաբար ինքնակոչը իրան սկսեց այնպէս պահել, որ բոլորովին վայել չէր ոռւս թագաւորին։ — նա չէր պահպանում ոռւսական աւանդութիւնները և սովորութիւնները և շատ առատաձեռն էր դէպի լեհերը։ Նրա հարանացուն չըշկամեցաւ ուղղափառութիւն ընդունել և նոյնիսկ պսակագրութիւնը կատարուեց հինգշաբթի, մայիսի 8-ին։ մի բան, որ թոյլ չէ տալիս ուղղափառ եկեղեցին։ Ժողովուրդը նորից սկսեց յուզուիլ և տրտնջալ, մեղագրելով թագաւորին ոռւս ժողովրդին լեհացնելու ցանկութեան մէջ։

Ժողովրդի այդ արամագրութիւնից օգտուեց խորամանկ բոյար Վասիլի Շույսկին։ Նա վաղուց գիտէր ճշմարտութիւնը, որ Դիմիտրին իսկական գահաժառանգը չէ, այլ վախստական վանական Գրիգորիյ Օտրեպինը։ Վասիլի Շոյսկին իրեն հաւատարիմ կողմնակիցներով արագ կերպով սկսեց ատրածելայդ տեղեկութիւնը և հաւատացնում էր, որ շուտով կը գտնուի իսկական Դիմիտրին։

Վասիլի Շոյսկին կարողացաւ իւր կողմը զըրաւել շատ բոյարների, առևտրականների և բաւականաչափ զօրք։ Մայիսի 16-ի գիշերը դաւադիրները այդ տեցին կրեմլը և աղմուկ բարձրացրին։ Ետապած ժողովուրդը սկսեց կոտորել լեհերին։ Այդ միենոյն ժամանակ գլխաւոր դաւադիրները ներս խուժեցին պալատ, կեղծ Դիմիտրին սպանուեց, Մա-

րիան կարողացաւ ծածկուիլ և վախչել դէպի լեհաստան։ Այսպիսի ցաւալի վախճան ունեցաւ ինքնակոչ Դիմիտրիի կարծատև թագաւորութիւնը։ Մոսկուայի գահը գարձեալ թափուր միաց և սկսուեց անտէրնչութիւնը։

* *

Բոյարները մտածեցին նոր թագաւորի ընտրութիւնը կատարել առանց համազգային ժողովի։ Շատ վէճեր և ինտրիգներ առաջ եկան։ Բոյարներից համարեա իւրաքանչիւրը ուզում էր, որ ինքը թագաւոր ընտրուի։ Բայց վերջիւներջոյթագաւորը ընտրուեց Վասիլիյ Շույսկին։ Ոչ ժողովուրդը և ոչ էլ բոյարները նրան չէին սիրում։ Վասիլի Շույսկին ճշմարտասէր մարդ չէր—սկզբում նա Գողունովի կողմն էր, յետոյ անցաւ ինքնակոչի կողմը, բայց շուտով գաւաճանեց և վերջինիս։ Բոյարները նրան ընտրել էին այն պայմանով, որ նա պետութեան բոլոր գործերը վճռի իրանց հետ միասին։ Բայց ժողովրդին այդ բանը անտանելի էր թւում, որովհետեւ զիտէր, որ բոյարները միշտ խորվութիւններով և ինտրիգներով են զբաղուած, ուստի և չեն կարող պետութեան կարիքները ինչպէս հարկն է հոգալ։ Բոյարները պետութեան կարևոր խորինները միշտ իրանց օգտին էին վճռում։ Վ. Շույսկու գէմ ժողովրդի մէջ արդէն անբաւականութիւններ էր առաջանում և զանգան քաղաքներ ապստամբութեան դրօշակ էին բարձրացրել։

Նորից սկսուեց լուրեր ատրածուել, թէ Մոսկայում սպանուած է ոչ թէ թագաւորը, այլ մի ինչ որ գերմանացի, և իբր թէ Դիմիտրին կենդանի է։

Շուտով հրապարակ է դալիս մի նոր ինքնակոչ, որի շուրջն է հաւաքւում ամեն կարգի խառնիձաղանձ ամբոխ: Նա դիմեց դէպի Մոսկուա: Նրա դէմ ուշ դարկուեց զօրք: Զինորները կուում էին տհաճութեամբ, այդ պատճառով էլ յաղթուեցին: Ինքնակոչն առանց դիմոգրութեան առաջ էր գնում: Նա կանգ առաւ Մոսկուայից 12 վերսա հեռաւորութեան վրայ գտնուող Տուշինո դիւղում, որից յետոյ ժողովուրդը նրան Տուշինեան գող անուանեց: Այդուղ հիմնուեց մի ամուր բանակ: Այս ինքնակոչին, որ պատմութեան մէջ յայտնի է իբրև կեղծ-Դիմիտրի Ո, յաջողւեց բոնել լեհաստան փախչող Մարինա Մնիշելին: Վերջինս իր օգտի համար նրան իր ամուսինը յայտարարեց: Խակապէս ով էր այդ ինքնակոչը մինչե հիմա էլ յայտնի չէ, միայն ժողովուրդը նրան «Տուշինեան գող» անուանեց: Հաղիւ էր այդ «գողի» յաջողութեան լուրը տարածուել, երբ չորս կողմից նրա մօտ էին հաւաքւում կօգակների խմբեր, լեհացիների զօրամասեր և այն: Եկան լիսովսկի և Սապէգո ազնուատոհմ պաները, որոնք ցանկանում էին հարստանալ և իշխանութիւն ձեռք բերել պատերազմում:

Մուսաստանի գրութիւնը այդ ժամանակներում սարսափելի ծանր էր: Լեհերի, կօգակների, և ոռու դաւաճանների խմբերը ազատ կերպով թալանում էին ժողովրդին, քաղաքները այրում և վիրաւորում էին թէ մեծերին և թէ փոքրերին. ժողովուրդը սարսափահար անտառներումն էր ապաստան գտնում:

Տուշինո գիւղն էին հաւաքուել ամեն տեսակի մարդիկ: Եկել էին նաև վաճառականներ և առևտուր

սկսել: Այդ դիւղը դառել էր մի քաղաք, որտեղ արքեցողութիւնը անպակաս էր: Գիշերը կարմիր բոցերի ցոլքերը տարածուում էին ամբողջ Ռուսաստանում, իսկ հեծկլատանքներն ու վայնասունները օդն էին թընդացնում:

Վասիլիյ Շոյսկիյ թագաւորը նստել էր Մոսկուայում: Նա ուժեղ իշխանութեան ձիրք չունէր, վախենում էր բոյարներից և ոչինչ չէր կարողանում անել, առանց զրամի և զօրքի:

Այսպիսի ծանր ժամանակ իր ազգական Միխայիլ Սկոպին-Շոյսկուն, որ իր հայրենիքը ջերմեռանդ սիրով պաշտող մի երիտասարդ էր, ուղարկեց Շուէդիայի թագաւորի մօտ օգնութիւն խնդրելու:

Եռանդուն Շոյսկին վարձեց մի բանակ, որին առաջնորդում էր Գելագարարը, նրա հետ միասին շարժուեց դէպի Մոսկուա, որ ազատի նրան «Տուշինսկի գող»-ի և լեհերի ձեռքից:

Այդ ժամանակ լեհական և լիտուխական զօրքը Մազեգայի և Լիսովսկու առաջնորդութեամբ պաշտեց Տրոյցօ-Սերգէկի մենաստանը, որ Ռուսաստանի հարուստ վանքն է:

Նրանց միակ նպատակն էր օգտուիլ այդ վանքի անթիւ և անհամար զանձերից:

Վանականները և մարտիկները անդրդուելի կերպով տանում էին պաշտօւմը և անձնատուր չէին լինում թշնամուն: Պաշտօւմը տարի ու կէս տեեց: Երիտասարդ Սկոպինը քանի-քանի անգամ փորձեց յետ մղել պաշտօւմը, բայց անկարող էր:

Նրան օգնութեան հաստ դէպքը: Լեհաց Միգիգ-

մունդ թագաւորը ուզենալով օգտուել, Թուսաստանի խառնակ վիճակից, կամենում էր բազմել ոռւսոց գահի վրայ:

Այդ նպատակով նա յետ կանչեց զօրքի մի մասը և դիմեց գէպի Սմօլենսկ. զօրքի միւս մասն էլ այլես չը ցանկանալով ծառայել ինքնակոչին, ցըուեցին զանազան կողմեր: Ինքնակոչը փախաւ Տուշինոյից, Վանքը պաշարով լեհերը և լիտուացիները այդ գէպի մասին լսելով, սկսեցին յետ նահանջել:

Սկոպին-Շոյսկին շուտով հասու նրանց յետելից և մի սսուկալի ջարդ տուաւ: Վանքի մէջ փակուածների ուրախութեանը չափ չկար: Մոսկուա տանող ձանապարհը բոլորովին ազատ էր, և երիտասարդ Շոյսկին իր զօրքի հետ միասին դիմեց Մոսկուա: Ժողովուրդը ամեն տեղ ցնծութեամբ ընդունեց նրան, ինչպէս իր ազատարար հռեշտակին: Բոլորի խօսքի առարկան երիտասարդ հերոսն էր: Ժողովուրդը արդէն մտածում էր նրան թագաւոր ընարել, անգործունեայ Վասիլիյ Իվանովիչի տեղ, բայց նո յանկարծ մեռնում է:

Այս լուրը շատ զարմացրեց ժողովրդին: Սիրելի բոյարի մահը Վասիլիյ Շոյսկուն էին վերագրում:

Կեանքը գառել էր սարսափելի և անուրախալի մի երկոյթ: Կարծես, այդ դառը կեանքը վերջ չովիտի ունենար: Ժողովրդական անբաւականութիւնները աճում էին: Եւ ահա 1610 թուի յուլիսի 10-ին ամբողջ Մոսկուան հաւաքուեց կարմիր հրապարակը, պալատից դուրս կանչեցին թագաւորին, զրկեցին գահից և ոյժով վանական ձեռնազըցին, իոկ նրա բոլոր ազգականներին բանտ նստեցրին:

* * *

Մկոուեցին սարսափելի չար տարիները: Խոռվութիւնը, սարսափը և գանութիւր տարածուել էին Մոսկուայում և ամբողջ Ռուսաստանում:

Կազոպափիչները և աւագակները լցուել էին ամբողջ երկիրը: Ոչ մի տեղ չէր կարելի գտնել պաշտպանութիւն և ձևարտութիւն:

Դարձեալ Թուսաստանում թագաւոր չկար: Մինչե նոր թագաւորի ընտրութիւնը արքայական իշխանութիւնը իւր ձեռքն էր տռել բոյարների դուման. վէճերը, խռովութիւնները և երկզառակութիւնները միշտ խանգարում էին նոր թագաւորի ընտրութեանը:

Շատերը կամենում էին, որ իրանց տոհմից ընտրութիւնը ումանք էլ լեհական գահի թագաժառանդ Վլադիմարին էին կամենում, և կային այնպիսիներ, որ «Տուշինեան զող»-ի կոմի էին:

Բայց միենոյն ժամանակ ժողովուրդը անօրէնութիւնների, բոնութիւնների, թալանների հարաւածի տակ բոլորովին ուժառպատ էր եղել:

Պէտք էր շտապել:

Այդ ժամանակ էր որ Հերմովէն պատրիարքը առաջին անգամ Ռուսանովների տոհմից պատանի Միհայիլ Ֆէոդորովիչի անունը տուաւ: Ժողովուրդը այդ յարդելի անունը ցնծութեամբ ընդունեց: Բայց բոյարները չէին կամենում իրանցից թագաւոր ունեալ: Կարծեալ սկսուեցին խռովութիւնները և ինտրիգները: Լեհական Վլադիմար զուհամանզի կողմնակիցները յաղթեցին և վճռուած էր Սիրիզմունդ թագաւորի մօտ գեսպաններ ուղարկել, որպէսզի

խնդրեն նրա որդուց, որ նա ոցւսաց գահին նստելով ուղարկառութիւն բնդունէ, միշտ կանգուն և հաւատարիմ մնայ Ռուսաստանին ու նրա կրօնին:

Վաղիոլտւին թագաւոր ընտրելու համար պայման էր կազուած: Այդ պայմանի համաձայն Ռուսակի միտրոպոլիտ Ֆիլարետի (աշխարհական Ֆէռգոր Նիկիահ Ռոմանովը) և իշխան Գոլիցինի գլխաւորութեամբ գեսպաններ ուղարկուեց լեհաց թագաւորի մօտ, որ այդ ժամանակ պաշարել էր Սմօլենսկը:

Սիզիզմունդը մերժեց գեսպանների խնդիրը և չը թողեց, որ իր որդին ուղաւաց գահը բարձրանայ: Սիզիզմունդը ինքը մատգրութիւն ունէր տիրանալ Ռուսաստանին և այդ պատճառով էլ միշտ գործը ձգձգում էր: Գեսպանները շատ լու գիտէին, որ Սիզիզմունդը իսկական լեն էր և կաթոլիկ, այդ պատճառով էլ նա երբէք ուղղափառութիւն չէր ընդունի: Երբ Սիզիզմունդը տեսաւ, որ գեսպանները իր մտաշուութիւնները հասկացել են, նեղացաւ նրանց վրայ և իբրև պատճանդներ ուղարկեց Վարշաւա:

Լեհերը արգէն ներս էին խուժել Մոսկուա և ուրիշ շատ քաղաքներ: Ամեն տեղ նրանք չարչարում և տանջում էին խեղճ ուղարկովին:

Ռուսները շատ գայրացան, երբ նըսանց յայտնի եղաւ իրանց գեսպանների անյաջողութիւնը և նրանց հասցրած վիրաւորմնքը: Ռուսաստանի քաղաքներից շատերը սկսեցին ապատամբել լեհերի գէմ: Ժողովրդի առաջնորդներից շատերն էլ ուսքի կանգնեցին օգնելու իրանց խորակուող հայրենիքին: Բոլորի գլխաւորն էր պատրիարք Հերմոգենը, որը ինչպէս տւուած է մի ձեռագրում, «անստան կեր:

պով կանգնել էր մեծ Ռուսաստանի պաշտպանութեան համար, նա կուռում էր բոլորի հետ առանց գէնքի և զօրքի».

Իսկապէս որ իրեմից բարձր կերպով լսուում էր սրբագանի ձայնը: Նա իր հրովարտակներում քարոզում էր ուղարկովին ամուր կանգնել իրանց հաւատի վրայ, հրաժարուել վաղիսալաւին երգուելուց և միացեալ ոյժով տաղալել օտարների լուծը:

Լեհերը և ուղարկովից շատերը լաւ հասկանալով ուղարկովին սէրը գէպի Հերմոգեն պատրիարքը, սախացեցին նրան, որ հրաման ուղարկէ ուղարկուաններին, որպէսզի վերջիններս զիջն: Սիզիզմունդը թագաւորի կամքին: Բայց պատրիարքը հըստաբուեց այդ բանից: Երբ ուղարկուաններին ձեռքին, յարձակում էր պատրիարքի վրայ, նա բարձրացրեց իր վզի խաչը և բացականչեց: «Բայց իմ միակ գէնքն է քո դանակի գէմ: նզուիեալ լինիս դու». կատաղած բոյարը յետ կանգնեց:

Այս ծանր ժամանկերում Ռետզանի զօրավար Պրակուպի Նիսապունովը ասաջինն էր, որ ուաքի կանգնեց: Նա կարողացաւ ողերուել իր քաղաքացիներին ի սէր հայրենիքի պաշտպանութեան: Նա իր քաղաքից հաւաքեց բաւականին զօրք:

Շուտով նրան օգնութեան հասան Ռուսաստանի 25 քաղաքներ և հարիւր հազարանոց մարտիկների խումբը պատրաստ էր: Այս ոյժերով Նիսապունովը գլումեց գէպի Մոսկուա, որտեղ լեհերը գեռ շարուակում էին իրանց վայրագութիւնները:

Ճանապարհին նրան միտցան «Տուշինեան գողա-
խ ծառայող կօզակների խմբերը, կեղծ Դմիտրի և
արդէն սպանուած էր կալուգայում»:

Երբ այդ լուրը լեհերին հասաւ, նրանք հասկա-
ցան սպասելիք վտանգը, ուստի և դիմեցին Հերմո-
գեն պատրիարքին. նրանք սպանալիքներով և խըն-
դիրքներով պահանջում էին, որ պատրիարքը հրա-
մայէ զօրաբանակին ցըռւել, Հերմոգենը բացարձա-
կապէս հրաժարուեց. Նրան բանտարկեցին Չուգովո
վանքի ներքնայարկերից մէկում: Բայց այնաեղից
ևս լուռում էին սրբազնի ջերմ քարոզները. նա
գարձեալ հնաբաւորութիւն էր գտնում հրովարտակներ
ուղարկել ուսու ժողովրդին, որպէսզի նա անձնատուր
չլինի թշնամուն:

Լեհերը փակուեցին Կրեմլում:

Արդէն ժողովրդի երեակայութեան մէջ, ինչպէս
մի գեղեցիկ արշալոյս փայլում էր լեհերի ծանր
լծից ազատուիլը. Լետպունովի զօրախմբերը մօտե-
ցան Մոսկուային և լեհերի հետ կոռուի բոնուած ժա-
մանակ քիչ էր մնում կորչէին: Բայց շուտափ օգնու-
թեան է հասնում յայտնի զօրավար իշխան Դմիտրի-
րի Միխայլովիչ Պոժարսկին. նա երկու անգամ ջար-
դեց լեհական զօրախմբերը: Բայց կորչէին մէկում
նա ծանր վիրաւորուեց և նրան տարան Տրոյցօ-Սեր-
գեևսկի վանքը:

Մոսկուայում փակուած լեհերը հասկացան հաս-
նելիք վտանգը. նրանք սկսեցին ժողովրդից խլել զէն-
քերը, բոլոր երկաթեայ իրեղէնները և սախացին
քաղաքի շուրջը փսուեր քանդիլ: Ժողովուրդը հրաժար-
ւեց այդ բանից: Լեհերը այլեցին Մոսկուան, յար-

ճակուեցին անգէն ժողովրդի վրայ և կոտորեցին մի
քանի հազար մարդ: Իշխան Պոժարսկու փոխարէն
նորից զօրքի վլուխն անցաւ Լետպունովը: Բայց
ապատամբուած կօզակները սպանեցին նորան:

* *

29393-67

Լետպունովից յետոյ Ռուսաստանը դարձեալ
անպաշտական և անտիրական մնաց: Այնպիսի խառ-
նակութիւններ ոկսուեցին, որ նկարագրեն անգամ
դժուար է. Ռուսաստանը իր խորտակման մօտ էր:
Մօլեննոկը անձնատուր եղաւ լեհերին:


Այնտեղ երկու տարուայ պաշարումից յետոյ 80
հազար մարդուց մնաց 8 հազար մարդ:

Սիգիզմունդ թագաւորը արդէն մտածում էր
Մոսկուա դիմել, որովհետև ճանապարհը բաց էր:

Բայց նախախնամութիւնը փրկեց Ռուսաստանը:
Ժողովուրդը ուշքի եկաւ. զգալով անխուսափելի վլ-
անգը, բոլորը հասկացան, որ պէտք է հայրենիքը
փրկել: Պէտք էր միանալ և միահամուռ ոյժերով կոռուլ
թշնամու դէմ:

Բոլորի խօսքի առարկան հայրենիքի փրկութիւ-
նըն էր, որի համար, թէ մեծ և թէ փոքր պատ էին
պահում: Բոլորը պատրաստ էին կամ մեռնել, կամ
ազատել հայրենիքը:

Այս ծանր ժամանակներում անգնահատելի ծա-
ռայութիւն մատուցեց Տրոյցօ Սերգեևսկի վանքը:
Սրբավայրը օգնում էր, թէ նիւթական միջոցներով և
թէ կոռուզ ոյժերով: Բացի այդ բոլորից, վարդապետ
Դիոնիցը և արքեպայ Միքայամ Պալիցինը անգալար
զրում էին հրովարագիւմներ, և գաղանի կերպով



յրում Թուաստանի բոլոր կողմերը: Հայրենաշունչ
ջերմ քարոզներով նրանք ժնզովրդին հրաւիրում էին
ամուռ կանգնել հայրենիքի և կրօնի պաշտպանու-
թեան համար:

Այդ հրովարտակները կարդացւում էին եկեղե-
ցիներում, որոնք ունինդիրների վրայ ճնշող տպաւո-
ւութւն էին թողնում: Բոլորը լաց էին լինում և երդ-
ում էին զոհուել հայրենիքի համար:

Այդ հրովարտակներից մէկն էլ ընկաւ Նիժնի-
նովգորոդ: Պատարագից յետոյ Մայր Եկեղեցու ա-
ւագ քահանան կարդում է հրովարտակը և համոզում
արձագանք տալ սուրբ վանքի հրաւերին:

Այդ ժամանակ գտնուեց մի հասարակ մսագործ,
որ միանգամից ժողովրդի առաջնորդը դարցաւ. նա
բոլորից յարգուած՝ զեմսկի սաւարսաա կողմա Զա-
խարիչ Մինինն էր: Նա հրապարակ դուրս եկաւ և
բարձր ձայնով բացականչեց. — Ուզգափառներ, օգնենք
Մոսկուային: Օգնենք մայր Ռուսաստանին: Զինու-
յենք մեր սաացուածքը. ծախենք մեր տները, գը-
րաւ դնենք կանանց և երեխաներին: Ընտենք մէ-
կին առաջնորդ: Աստծու օգնութեամբ մենք կիրա-
զորենք այդ մեծ գործը: Եթէ այդ բանը մենք
սկսենք, կմիանան մեզ հետ նաև մաս մացած բոլոր քա-
ղաքները և մենք կազառուենք օտարներից:

Բոլորը իրանց որտին մօտ ընդունեցին նրա խօս-
քերը: Բոլորը տուն վազեցին և վերադարձան գրը-
պանները փողով լիքը: Կանայք տուին իրենց ականջի
օղերը, մատանիները և բոլոր թանգարին իրերը: Մի-
նինը իր ամբողջ կարողութիւնը այդ մեծ գործին

նուիրեց: Տղոմարդիկ զէնք էին ձեռք բերում և
կոիւ պահանջում:

Այդ մեծ գործի լուրը կայծակի արագութեամբ
տարածուեց ամբողջ Ռուսաստանում:

Բոլոր քարաքները շտապում էին փող և զօրա-
խմբեր ուղարկել: Հաւաքուել էր բաւականին մեծ
զումար և բաւականաչափ զօրք:

Միայն մնաւմ էր մի արժանաւոր առաջնորդ
ընտրել: Ժողովուրդը ընտրեց իշխան Պաժարսկուն:
Դեպանաները նրա մօտ գնացին, որպէսզի նրան խընդ-
րեն, որ յանձն առնի զօրքի առաջնորդութիւնը:

Քաջ իշխանը սւրախութեամբ ընդունեց զօրքի
առաջնորդութիւնը:

Նա պահանջեց, որ գանձապահ ընտրուի արժա-
նաւոր Կողմա Մինինը: Այդպէս էլ արին:

1612 թուի յուլիս ամսին իշխան Պաժարսկու
առաջնորդութեամբ տհագին զօրքը շարժուեց Մոս-
կուան ազտաելու: Լեներին օգնութեան հասաւ քաջ
զետման Խոդկիչը:

Բայց Պաժարսկին շատպեց և Արքատեան դոների
առաջ կանգնելով, լեների ձանուպարհը կտրեց:

Խոդկիչը յարձակուեց նրա վրայ և սկսուեց
կոիւը. բայց ոուս մարտիկները յետ մղեցին գրոնք:
Խոդկիչը յետ նահանջեց և փորձեց մի ուրիշ կողմից
մտնել Մոսկուա: Բայց և այսաեղ Պաժարսկին նրա
առաջն առաւ և ոուսները սարսափելի կոուի բոնուե-
ցին լեների հետ, որը տեսնեց ամբողջ օրը, օգոստոսի
24-ին և ոուսները յաղթեցին: Խոդկիչը մեծ մխա-
ներ կրեց և Մոսկուայից յետ նահանջեց: Իշխան Պա-

ժարութիւն զօրախմբերով մտաւ բաղմաչարչոր քաղաքը:

Այս լեհերը, որ փակուել էին կրեմլում, 1612 թ. մոկտեմբեր ամսին անձնատուր եղան, նրանց բոլորին էլ դուրս քշեցին Մոսկուայից Թուսների ուրախութեանը չափ չկար:

Բոլորը լոց էին լինում, ազօթում, համբուրում իրար հետ և շնորհաւորում այդ մեծ աօնը: Մկանուցին թափորներ և հանդիսաւոր մաղթանքներ: Ոգեւորուած ժողովուրդը իր սրաի խորքից երգում էր, «Քեզ ենք փառաբանում, ով Աստուած» գոհաբանական երգը: Մինինը և Պաժարսկին դարցան ժողովրդի սիրելի հերսոները:

* *

Մոսկուայից լեհերին դուրս քշելու լուրը կայծակի որագութեամբ աարածուեց ամբողջ Թուսատանում, ամեն աեղ ցնծութիւն և ուրախութիւն էր տիրոււ:

Բայց և այսպէս ժողովրդի դրութիւնը ձանք էր: Երկիրը աւերուած և կողոպտուած, ոչ թագաւոր կար և ոչ էլ ուժեղ իշխանութիւն:

Բոլորը զգում էին թագաւորի ընտրութեան կարևորութիւնը: Վերջապէս հասել էր Թուսատանի կրած թշուատութիւնների վերջը: Բոլորը համանում էին, որ Մոսկուայի թագաւորութիւնը կարող է ամրանալ և գանձալ մի մեծ և անսասան պետութիւն, միայն վերջանային խոռովութիւնները ու խառնակութիւնները:

Ժամանակաւորապէս Թուսաց պետութեան գործերը կառավարում էին Պաժարսկին և Տրուբեցիի իշ-

խանները և Կոզմա Մինինը: Նրանց առաջի գործը պէտք է լինէր թագաւորի ընտրութիւնը, ուստի և նրանք բոլորին համոզում էին, որ այդ ընտրութիւնը շատ կարեւոր է:

Շատերը խօսում էին, թէ հարկաւոր է Պաժարսկուն ընտրել թագաւոր, բայց նա իրեն անարժան համարելով հրաժարուեց այդպիսի մեծ պատուից:

Այս ժամանակ Մոսկուայի զօրավարները հրովարակներ ուղարկեցին բոլոր քաղաքները, որպէսզի վերջիններս ժողովի ուղարկեն «իրանց ամենալաւ, հաստամիտ և խելօք ներկայացուցիչներին» թագաւորի ընտրութեան համար:

Այդ հրովարտակներում տոսւած էր. «Առանց թագաւորի թագաւորութիւնը կանգուն չէ, որովհետեւ նրա մասին հոգացող չկայ. առանց թագաւորի մեր պետութիւնը ամբողջովին խորանակուից և քանի գնում աւագակութիւնները շատանում են»:

Երբ ընտրուածները հաւաքուեցին, երեք օրեայ պասից և ազօթքից յետոյ, բացին Զեմսկի ժողովի նիստը:

Երկար մտածում, վիճում և քննադատում էին այդ մեծ խնդիրների մասին... Բայց և այսպէս վճռեցին օտարներից թագաւոր չընտրել: Թագաւորը պէտք է ընտրուէր ուղափառ ուսւներից: Մկանցին հետաքրքրուիր, թէ բոյարներից որ տոհմը մօտ է հին թագաւորական տանը:

Բոյարներից ամեն մէկը երազում էր Մոսկուայի զահին տիրանալ, ուստի և նրանք ոչ մի միջոց չեին խնայում, թէ կաշառքներով և թէ հիւրասիրութիւններով իրանց նպատակին հասնելու:

Բայց ժողովը երկար վիճում էր և չէր կարուցանում մի որոշ եզրակացութեան դալ:

Յանկարծ ազնուականներից մէկը գրաւոր կերպով ժողովին է ներկայացնում Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովի անունը, որպէս արժանաւոր թեկնածու:

Այդ անունը մեծ շփոթութիւն առաջացրեց: Գոռում և բացականչում էին. «Այդ ովկէ է ներկայացրել այդ գրութիւնը: Ինչու թագաւոր բնարել անպատճառ Ռոմանովին»:

Պատասխանը այսպէս էր. «որովհետեւ նա իվան Գրոգնու աներոջ թոռն է»:

Այդ ժամանակ հրապարակ եկաւ Դօնի շրջանից ընտրուած առամանը մի նոր գրութեամբ:

— Ինչի՞ մասին է քո գրութիւնը. հարցրեց իշխան Պաժարսկին:

— Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովի մասին. նա թագաւորական տոհմին ամենից մօտ է: Նրան են կամենում թագաւոր տեսնել ինձ ընտրողները.

Ռոմանովի անունը կայծակի արագութեամբ տարածուեց ժողովականների մէջ. վէճերը դադարեցին, որից յետոյ սկսուեց մեղմ և ուրախալի խորհրդակցութիւններ:

Վերջիշեցին ամենից սիրուած Ֆէոդոր Նիկոլայիչ անունը, ովը յետոյ դառել էր հռչակաւոր մետրապոլիտ Ֆելարետարը:

Խօսում էին նրա զէպի հայրենիքը տածած սիրոյ մասին: Յիշեցին բոյար Ռոմանովին յարգւած ամբողջ ցեղը, որ այնքան տանջանքներ ու հալածանքներ էր կրել Գոդունովից, Ափսոսում էին,

որ մետրապոլիտ Ֆելարետը, այժմ էլ տանջւում է իբրև պատամագ լեհերի մօտ: Եւ վերջապէս յիշեցին, որ ամենից յարգուած և սիրուած սրբագան Հերմոգենը թագաւոր անուաննեց երիտասարդ Միխայիլ Ֆէոդորովիչին:

Այդ յիշողութիւնները բոլորի սրտին մօտ էր և միասին բացականչեցին:

— Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովն է մեր իսկական թագաւորը: ցանկանում ենք, որ Միխայիլ Ֆէոդորովիչը թագաւոր լինի: Ռոմանովից հաճելին չկայ:

Այսպիսով Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովը թեկնածու ընտրուեց Մոսկուայի գահին:

Իսկական ընտրութիւնը շատ լուրջ հարց էր, որը պէտք է վճռէր ամբողջ Ռուսաստանը: Կրկին երկի բոլոր կողմերը մարդիկ ուղարկեցին, որպէսզի նրանք ժողորդի կարծիքը իմանան նորընտիր թագաւորի մասին:

Այդ մարդիկ յետ գալով գաւառներից յայտնեցին, որ ժողովուրդը ուրախութեամբ կամենում է Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովին թագաւոր տեսնել: Ժողովուրդը ասում էր, «վաղուց պէտք է Ռոմանովների տոհմից թագաւոր ընտրուած լինէին: Նրանք միշտ Ռուսաստանի բարիքնեն կամեցել: Թէպէտ Միխայիլ Ֆէոդորովիչը պատանի է, բայց Տէրը նրան իմաստութիւն կտայ»:

1613 թուի փետրուարի 21-ին հաւաքուեց վերջին ժողովը Մոսկուայում: Ներկայացան բոլոր ընտրուածները: Ժողովրդի բազմութիւնը շրջապատել էր կրկելլը:

Բոլոր ընտրուածները սկսեցին մէկը միւսի յետից գրութիւններ ներկայացնել, որոնց մէջ յիշած էր Միխայիլ Ֆէոդորովիչի անունը, իբրև ամենայարմար թեկնածու Մոսկուայի գահին.

Այն ժամանակ Իհազանի արքեպիսկոպոս Ֆէոդորիչը, անտես Արքահամ Պալիցինը և Բոյար Մուռոզովը գուրս եկան Կարմիր հրապարակը: Արեգակը պարզ փայլում էր: Ժողովրդի ահազին բազմութիւնը սպասում էր հրապարակում:

Ժողովրդին հարցրին.

— Ումն էք թագաւոր ուզում, ժողովուրդ:

Եւ բոլորը միաձայն բացականչեցին:

— Թող մեր թագաւորը լինի Միխայիլ Ֆէոդորովիչ Ռումանովը:

— Այդ բանը կիրականանայ ըստ նախախնամութեան ցանկութեան, ուրախ բացականչեց Արքահամ Պալիցինը:

Մազթանք կատարեցին և նորընալիր թագաւորի անունը յիշեցին:

Բոլորը ջերմեսանգօրէն ազօթում էին, որ արքայական ձաճանչափայլ անունը մէծ պետութեանց առաջ փառաւորուի, ահարկու լինի և Ռուսաց պետութեան ուղղափառ գաւանանքը փայլէ ամբողջ տիեզերքում և վերջանան Ռուսաստանի թշուառութիւններն ու աւերածութիւնները:

Այդ բանից յետոյ սկսեցին խաչը համբուրել իւ հաւատարմութիւննորընալիր թագաւորի: Կազմը մի առանձին հրովարակ, որտեղ յիշուած էր զեմսկի ժողովի վճիռը 277 անդամների ստորագրու-

թեամբ, որոնցից 12-ը գիւղացիների ստորագրութիւն էր:

Բոլորը ուրախացած իրար էին շնորհաւորում այդ մեծ գործի համար:

Վճռուած էր նորընալիր թագաւորի մօտ ուղարկել մի մեծ դեսպանութիւն, որպէսզի խնդրեն նրան Ռուսաստանի վրայ թագաւոր պսակուել, թէպէտ հաստատ ոչ ոք չգիտէր, թէ որտեղ է գտնւում Միխայիլ Ֆէոդորովիչը իր մօր հետ միասին:

1613 թ. փետրուարի 21-ը պէտք է սուրբ և անմուռանալի լինի իւրաքանչիւր ուստ մարդու համար:

Այդ օրուանից է սկսում մեր երկրի հանգստութիւնը, բարգաւաճումը և լուսաւորութիւնը Ռումանովների տան թագաւորների արքայական կոռավարութեան տակ:

Այն ժամանակ երբ ամբողջ Ռուսաստանը ցընծում էր իր նոր թագաւորի ընտրութեամբ, լեհերը գաղտնի կերպով կամենում էին նրան կորստեան մատնել:

Միխայիլ Ֆէոդորովիչի հայր միտրոպոլիտ Ֆիլարետը, դեռ տանջում էր լեհերի մօտ իրեւ պատանդ: Խոկ 16-ամեայ պատանի թագաւորը իբ կրօնաւորուհի մօր հետ ապրում էր Կոստրոմայում, իբ հայրենի կալուածքներից մէկում, Խղատինսկի վանքի մօտ:

Թէ մայրը և թէ որդին հեռու լինելով բոյարների ինտերիգներից, չէին էլ մտածում իրանց սպասող վիճակի մասին:

Խղատինսկի վանքից 70 վերստ հեռաւորու-

թեան վրայ գտնւում էր բոյար Ռոմանովների Դոմ-
նինօ կալուածքը, որը շրջապատուած էր Կոստրո-
մայի անանցնելի անտառներով և ճահիճներով:

Մի անմարդաբնակ և խուլ անկիւն էր:

Լեհերը, որոնք դեռ երազում էին Մուկուայի
գահին տիրանալ, իմանալով, որ պատանի Միխայիլը
ապրում է Կոստրոմայի մօտերքում առանց պաշտ-
պանութեան, ծիաւորների մի խումբ ուղարկեցին,
որպէսզի նրան կենդանի կամ մեռած լեհաստան
հասցնեն: Զիաւորների խումբը եկաւ Դոմինօ գիւղը
և դիմեց իվան Սուսանինին և պահանջեց, որ նա
ցոյց տայ այն ճանապարհը, որ տանում է դէպի
Միխայիլի կալուածքը:

—Ինչների՞դ է հարկաւոր ձեզ մեր կայսրը:—
հարցրեց իվան Սուսանինը:

—Մենք նրա հետ գործ ունինք և պէտք է նը-
րան յանձնենք կարեոր հրովարտակներ, պատախա-
նեցին լեհերը:

Իվան Սուսանինը իսկոյն հասկացաւ նրանց մը-
տագրութիւնը և վճռեց, իր կեանքը զոհելով, փրկել
իւր թագաւորին: Նա իր փեսային գաղտնի կերպով
ուղարկեց Միխայիլ Ֆէոդորովիչին յայտնելու նրան
սպասող վտանգի մասին, իսկ ինքը առաջնորդեց
լեհերին:

Չմեռային մի երեկոյ էր: Լեհերը շտապում
էին: Թագաւորի հաւատարիմ ծառան նրանց տա-
րաւ Կոստրոմայի խուլ անտառներով: Երկար ժա-
մանակ նրանք թափառում էին: Բարձրացաւ հիւսի-
սիսային քամին և ցուրտը քանի գնում սաստկա-
նում էր: Նրանք հասել էին անանացնելի վայրերը:

Մի քանի ձիաւորներ լնկան անելանելի ճահիճների
մէջ:

—Կանգնիր, բացականչեցին լեհերը:—Այդ ժւր
ես բերել մեզ:

Իվան Սուսանինը խաչակնքեց: Նա լաւ գիտէր,
որ ճահապարհից շատ է շեղուել և որ նրան տան-
ջալի մահ է սպասում: Լեհերը սպասնալիքներով շըր-
ջապատեցին նրան և գուացին

Դու խաբեցիր մեզ:

Իվան Սուսանինը առանց տասանուելու ասաց:

—Միթէ զուք կարծում էիր, որ ես ձեր ձեռքը
կմտանեմ իմ թագաւորին, գիացէք, որ սուսների
մէջ չէք գանի գտաւածններ... Դուք այսակղից՝ այլ
հս չէք կարող սուսաց թագաւորի մօտ գնալ..: Եւ
ես մահից չեմ վախենում: Զարագործները իրանց
սրերի հարուածների տակ կտոր.կտոր արխնվեհանձն
սիրտ ունեցող Սուսանինին, բայց իրանք էլ չկարո-
ղանալով գուրս գալ անտառից, մեռան ծերունու
արիւնով ներկուած գետնի վրայ և այնաեղ իրանց
համար գերեզման գտան:

Մի քանի օրից լետոյ, երբ գիւղացիները փայ-
տահատներից իմացան կատարուած դէպքի մասին,
հաւաքեցին իրանց համագեղացու մարմինը և պատ-
ով թաղեցին Դոմինօ գիւղի եկեղեցու մօտ:

Յետոյ Սուսանինի անձնուիրութեան համար,
թագաւորը առատ վարձատրեց նրա համագիւղացի-
ներին:

Նրանք ընդմիշտ ազատուեցին հարկերից և ծա-
ռայութիւններից: Սուսանինի սերունդը մինչեւ հիմայ
էլ օգտուում է թագաւորի նուիրած իրաւունքներից:

Նրանք գաղթեցին Դոմինօյից 60 վերսա՛ հեռաւորութեան վրայ գանուուզ կորոբովո գիւղը, որտեղ իրանց նախորդի յիշատավին կառուցեցին մի եկեղեցի Յոհաննէս Կարապետի անուամբ:

Իսկ Կոստանդայում ժողովրդական միջոցներով մի մեծ արձան կանգնեցրին Խւան Սուսանինի յիշատակին:

* * *

Մոսկուայում արգէն հաւաքուել էր մի մեծ դեսպանութիւն, որպէսզի նորընտիր թագաւորից ինդրեն պսակուել Ռուսաստանի թագաւոր, Դեսպանների գլխաւոր կարգուեց Ռիազանի արքեպիսկոպոս Ֆէոդորիչը, Տրոյցի վանքի տնտես Աբրահամ Պալիցինը, բոյարներից՝ իշխան Գոլիցինը, իշխան Շերեմետեկ և ուրիշ շատ յայտնի մարդիկ:

Ոչ ոք հաստատապէս չգիտէր, թէ նրտեղ է ապրում Միխայիլ Ռոմանովը: Դեսպանութիւնը պէտք է գնալ Եարասլաւ, կամ այնտեղ ուր կլինի թագաւորը:

Ճանապարհին աեղեկանալով թէ թագաւորը նրտեղ է ապրում, մարտի 13-ին հասան Կոստանդա: Հետեւալ օրը Ֆէդորովի Տիրամօր պատկերի առաջ տօն կատարուեց: Ժողովրդի տհագին բազմութիւն էր հաւաքուել: Զօրավարը յայտնեց ժողովրդին դեսպանների գալստեան պատճառը: Բոլորը ցնծութեան մէջ էին:

Այն ժամանակ խաչվառներով և տեղական սրբերի պատկերներով թափորը գիմեց դէպի իպատիկուի վանքը: Ժողովրդի բազմութիւնը հետեւմ էր դեսպաններին և թափորին:

Պատանի Միխայիլ Ֆէոդորովիչը և իր կլօնաւուրուհի մայրը Մարֆան գուրս եկան վանքից թափորին գիմաւորելու:

Պատանին երկիւղածութեամբ ծունկ չոքեց և համբուլբեց հրաշագործ պատկերը:

Այսաեղ տեղի ունեցաւ մի սրտառուչ տեսարան: Դեսպանները յայտնեցին Միխայիլին, որ համայն ժողովուրդի կողմից թագաւորընտրուի և տիրանայ գահին:

Պատանի Միխայիլը վախեցաւ և բարձր լաց լինելով ասաց, որ նա չէ կամենում թագաւոր լինել:

Սաստիկ վախ և ցաւ զգաց նրա մօր սիրոը, որ վախեցած ասաց.

— Ես չեմ կարող օրհնել իմ սրդուն իբրև թագաւոր: Նա թոյլ է, և պատանի, չի կարող կառավարել պետութիւնը:

Դեսպանները սկսեցին խնդրել և համոզել մօրը և որդուն: Բայց նրանք երբէք չէին ուզում համաձայնուիլ և թափորի յետեկց մայր եկեղեցի երթալ:

Որքան բոյարներից ամեն մէկը կամենում էր համոզել, այնքան աւելի էին վախենում պատանին և նրա սիրող մայրը:

Կրօնաւորուհի Մարֆան շատ լաւ գիտէր, թէ ինչ են բոյարները: Նրանց նախատեց, որ նրանց չարութեան և ինտրիգների պատճառով կորցրեց իր ամուսնուն, ամբողջ տոհմը և ուժով կրօնաւորուհի ձեռնապրուեց: Նա իւր սրդուն աչքի լրյսից աւելի լաւ էր պահպանում մենակեցութեան մէջ: Նրա քնքոյշ որդին չէր կարող կառավարուել բոյարների հետ. նրա հայրն էլ դարձեալ որպէս հոգեստրական տանջւում էր գերութեան մէջ: Նրանց տեղը վանքն էր և ոչ թագաւորական պալատը:

Վախեցած մայրը գառնութեամբ և արցունքնեռով ասաց մեծ գեսպաններին.

Ոչ, ես չեմ օրհնի իմ որդուն. նրա մտքովն անգամ չէ անցել թագաւոր լինել այսպիսի մի լաւ երկրում. նա անչափահաս է, իսկ ուստ մարդիկ մոռացել են թէ ինչպէս պէտք է ծառայել թագաւորին. Մետրապոլիտ Ֆիլարետը գերի է լեհաց թագաւորի մօտ—շարունակեց Մարֆան—նա կիմանայ, որ Միխայիլին են թագաւոր ընտրել և նրա հօրից վրէժինդիր կլինի. Ոչ, իմ պատանին թագաւոր չէ կարող լինել...

Բայց գեսպանները իրանցն էին պնդում: Հազիւ կարողացան նրանց եկեղեցի տանել և այստեղ նորից ներկայացրին իրանց հրովարակները,

Միխայիլ Ֆէոդորովիչը վախից և յուզումից հրաժարւում էր:

Դեսպանները արցունքները աչքերին աղերսում և ծունը էին դնում թագաւորի առաջ: Ամբողջ ժողովուրդը չոքել էր:

Եյն ժամանակ առաջ եկաւ արքեպիսկոպոս Ֆէոդորիչը և ասաց.

Միթէ նա կ'համարձակուի հրաժարուիլ և ազօթքներն ու ծնրագրութիւնը չնդունել. նրան թագաւոր ենք ընտրել Աստծոյ կամքով և ոչ իւր ցանկութեամբ. Տէր Աստուած բալոր ուղղափառների սրտում մի միաք զրեց, թէ Մսոկուայում և թէ մնացեալ քաղքներում: Իսկ նախկին թագաւորները գահ էին բարձրանում իրանց ցանկութեամբ...

Դառնալով գէպի կրօնաւորուհի Մարֆային, պաները ասացին.

— Երկիրը աւերռուած է: Թշնամիները կամենում են պետութիւնը խորտակել և լատինականութիւն տարածել: Եւ ահա ժողովուրդը Աստուածային ներշնչմամբ իր համար թագաւոր ընտրեց, իսկ նա հրաժարում է: Ժողովուրդը նորից կմնայ առանց գլխի և պետութիւնն աւելի մեծ չարիքներ և աւերածութիւններ կ'կրի: Եթէ այդ անօրէն բանը կատարուի, այն ժամանակ Աստուած կզայրանայ Միխայիլի և նրա մօր վրայ:

Եթէ նրա հայրը՝ մեծ Ֆիլարետը այստեղ լինէր, երբէք չէր թողնի, որ որդին ժողովրդին վիրտուորանք հասցնի և ամբողջ Ռուսաստանին իրանից վանէ:

Արքեպիսկոպոսի կրակոս ճառը մեծ ազգեցութիւն թողեց: Ժողովուրդը ծունկ չոքած լաց էր լինում: Դեսպաններն էլ աղերսում էին և ծունը դնում ցերեկուայ ժամը 2-ից մինչև երեկոյեան ժամը 9-ը:

Պատանի թագաւորը չափազանց յուզուած էր:

Վերջապէս երկար ու բարակ համոզելուց յետոյ, Միխայիլը և Մարֆան համաձայնուեցին: Մայրը իրեն անոյժ զգալով կոռեկտ ժողովրդական ցանկութեան հետ, օրհնեց իր որդուն: Նրան ատրաւ հրաշագործ պատկերի մօտ և ասաց.

— Տիրամայր, իմ որդին քեզ եմ յանձնում: Ժողովրդի լացը ցնծութան փոխուեց:

Պատանի թագաւորը արքեպիսկոպոս Ֆէոդորիչից ընդունեց արքայական գալազանը և յայտարեց, որ շուտով Մսոկուա կը ճանապարհուի:

Մարտի 19-ին նոր թագաւորը հրաժեշտ տուեց իր խաղաղ բնակավայր Կոստրոմայի վանքին և իր մօր հետ դիմեց գէպի Մոսկուա:

Յունիսի 11-ին Միխայիլ Ռոմանովին Ուսպենսկու մայր եկեղեցում թագաւոր օծեցին:

Պատանի թագաւորը չմոռացաւ իր հայրենիքը ազատողներին: Նա առատ կերպով վարձատրեց Մինինին և Պաժարսկուն: Իշխան Պաժարսկին բոյարների կարգն անցաւ, իսկ Կոզմա Մինինը Դուքայի ազնուական կոչում ստացաւ.

Եւ այդպիսով միայն մեր հայրենի Ռուսաստանը հանգստացաւ:

* *

Այսպէս ընարուեց և գահ բարձրացաւ, նարկայիս էլ ապահով կերպով թագաւորող, Ռոմանովների Տան նահապետը: Այն օրուանից անցել է 300 տարի, որի ընթացքում միայն թագաւորել է Ռոմանովների Տունը: Նրանց արքայական ինսմքի տակ Մոսկովյան աւերուածթագաւորութիւնը զարձաւ մեծ Ռուսական պետութիւնը, որին իր մեծութեամբ Պետրոս I անւանում էր «վեցերորդ աշխարհամաս» և որը իր հզօրութեամբ աշխարհին երեսին առաջին տեղերից մէկն է բռնում:



Издание Комиссии по благоустройству г. Баку.

Баку. Типография А. Н. Тараева и И. О. Степанянца.

1009

2015

